

ներէն, բայց որ կրնար ետեւէն հազարներ քաշել... Այդ յատկութիւնները կը գործածէր անիկա միշտ իր թեզին ի նպաստ, որ առնուազն մեր ժողովուրդին ազատագրութիւնն էր եւ սովորաբար մարդկութեան երջանկութիւնը եւ ընկերվարական բոլոր փայլուն ու տրամօրէն հերքուած երազները: Աւելցուցէք երեւակայելու նոյնքան ահաւոր դիւրութիւն մը, երազ մը ձեւելու, հագնելու, զայն մորթի մը պէս իրը ընելու, նոր բառով մը՝ իւրացնելու գրական ալ ընկալչութիւնը: Ու այս ամէնուն մէջէն այս ամէնը իրագործելու անհաւատալի բնականութիւն, պարզութիւն, որոնք երբեմն իրական, աւելի յաճախ սոփեստութեամբ, վարժ ու անմեղ միամտութեամբ մը կը քողաւորին ու կը վերածուին շնորհի: Այս մտածումները, անշուշտ, այնքան յստակ չէին իմ մտքին, որքան, հիմա: Բեմերու վրայ անկէ ետք տրուեցան ինծի շատ-շատ պատեհութիւններ տեսնելու մարդեր, որոնք նոյն այդ շնորհները առաւելեալ աստիճանով մը կը պարզէին, եռանդուն, դղրդող, բայց խորքով այնքան աղքատախնամ:

Ըսի, թէ հազիւ տարի մը կար վանքէն հեռանալս: Ըսի, թէ ինչ կը բերէի այդ շէնքէն ինծի հետ: Բայց չըսի, թէ սորվելու տենդը որքան դժբախտ ճակատագիր մը ունէր իրագործելի: Չէի կրնար մտքէս հեռացնել վերջին տեսարանը՝ Դուրեան սրբազանի մատենադարանին մէջ տեղի ունեցած: Պատուական այդ մարդը գորոված էր վճռական որոշումին վայրագութեանը դէմ, վանքը ձգելու, քանի որ ինծի սպասող աշխարհը ան կը ճանչնար զարմանալի յատկութեամբ: Պիտի չհասկցուէի ու պիտի հալածուէի: Քիթս հողին պիտի քսուէր, անօգուտ այդ նուաստութիւնը դատապարտուած էի հանդուրժելու: Պիտի այրիանար միտքս ու գրելու երազին ցանկութիւնը պիտի ցամքէր նման տունկին, որ կ'աճի արեւէ զուրկ: Բոլոր այս պատահականութեան դէմ իմ կեցուածքս անսասան էր: Պիտի չինէի միտքիս ճամբան, յետոյ՝ միտքս, յետոյ՝ արուեստներու սպասը, իրեն պէս, բայց